ՀԱՌԱՋԱՆՔ

Փախչող պատկերք է ամէն բան.
Բաժակ հաճոյ կամ դառնահամ,
Երգ ցընծալից, եղերական
Խաբէն չըրթունք անփորձ մարդկան.
Ճըշմարիտ են Երկինք միայն։
Արեք կ'ելնան ու կը մըտնան
Գահոյք՝ ցընորք խաբէական,
Մեծամեծ փառք կ'անչըքանան,
Կուտայ զամէն խուլ գերեզման.
Միայն պայծառ Երկնից խորան։
Մըրըրիկ օրն՝ մի նաւավար
Որ կը սահի միշտ հողմավար՝
Մըղուած հեռու ափունքներէն,
Խութք խոշընդոտն առջև կ'ելնեն.
Միայն անդորր, հօն յԵրկինք են։

ՌԸՊՈԻԼ

ՇԻՆԱԿԱՆՆ ԴԱՆՈՒԲԻ

Չէ մարթ երբէք դատել ըստ աչս ըզմարդիկ.
Բարւոք խըրատ. այլ ասացեալ վաղ ուրեմն։
Ըզմըկանէն [1] գըրեալն երբեմն իմ յայս գիրք՝
Ըզխըրատու ըստուգութիւն հաւաստեն։
Զիմաստ և միտք այժմեան իմոյ առակի
Նաւթճեն Սոկրատ և Եսովպոս,
Եւ շինականն որ առ գետով Դանուբի.
Ջառնէս Մարկոս–Աւրելիոս
Տայ մեզ պատկեր ճըշտաստիպ։
Իմաստասէրքս չեն ոչ ումեք անծանօթ.
Այլ ըզվերջնոյս ուրուատիպ
Տացուք բանիւս կարճառօտ։
Կըզակ նորին ընդ թաւամազ խիտ մօրուօք,
Մարմին բընաւ բըրդազգեաց,
Գունակ արջոյ. զոր մայրն երբէք ոչ լիզեաց։
Աչք թաքթաքուր, թաւ յօնիւք.
Հայեաց խոժոռ, քիթ կորացեալ, շըրթունք լայն,
Եւ ըզմիջով ածեալ գօտի լոռ չուան։
Ի քաղաքաց որ առ գետով Դանուբի
Նուիրակ էր այրս անհեթեթ անճոռնի,

1 Անփորձ մուկն և աքլորին առակն։

digitised by A.R.A.R.@

— Քանզի յայնժամ չէր տեղ, կամ վայր բացական
Յոր ոչ մխէր ձեռըն Հռովմայ բըռնական ։ —
Եկն Նուիրակս, խօսել կալաւ նա այսպէս ·
« Հռովմայեցիք, և ծերակոյտդ կազմ 'ի լուր ․․
« Ըզդիս կարգամ ինձ յօգնութիւն այժմէն ես ,
« Ի տացեն ինձ խօսել զարդարն, ոչ 'ի զուր ։
« Առանց նոցա միտք մարդոց կան հակամէտ
« Ի չարըն կոյս, և սիրեն թիւր և ըզխէթ ։
« Ապախտ ըզդիս արարեալ և զօրինօքն անցանեն ·
« Վըկայ բանիս մեք ահա
« Ընկճեալքս անդրէն 'նդ ագահ բըռամբըն Հռովմայ ,
« Որոց յաղթող ոչ բնաւ ասպարք և ոչ զէնք
« Ըզմեզ ընկճեն · այլ մեր մեղաց արժանհաս
« Ետուն զնոսա Երկնաւորք մեզ պատուհաս ։
« Արդ երկերուք, ո՛ արք Հռովմայ, մի գուցէ
« Ըզմեր արտօսր Երկինք առ ձեզ դարձուցէ ·
« Եւ փոխադարձ արդարադատ ուխտ չափմամբ
« Տացէ ըզձեզ ըստրուկս նըկունս մեր ձեռամբ ։
« Ո՛յր վասըն մեք ընդ ձեր լըծով նըւաճիմք ,
« Միթէ իցէք քան ըզհարիւր ազգք ազինք
« Միայն՝ ընտրեալք լաւագոյն ·
« Որո՞վ աղէ՛, դուք օրինօք տիրեցէք
« Տիեզերաց համարուն ,
« Է՞ր վեր 'ի վայր առնել զմեր տուն ։ Ակօսաբեկ
« Առնէաք մեք ըզդաշտորայս մեր զամէն,
« Ջեռք մեր էին վարժք, կիրթք 'ի մաճ, նոյնք 'ի զէն ·
« Գերմանացւոց զի՞նչ դուք ետուք 'ի յուսում,
« Արդէն նոքա ճարտար էին և կորովիք 'ի մըրցում ·
« Եթէ նոցա էր ցանկութիւն
« Եւ բըռնութիւն ձեր հանգոյն ,
« Գուցէ նոքա հըզօրագոյնք քան ըզձեզ
« Գործ գործէին, խըղճի մըտօք, մարդկապէս ։
« Գրետորք ձեր անօրէնք , որ զի՞նչ ընդ մեզ անցուցին ,
« Անցանէ զանցանէ ըստ միտս անգամ մարդկային ։
« Անարգեցան դիք և սեղանք սըրբազան
« Ի չար գործոց յափըշտակիչ վատ մարդկան ։
« Ի միտ առէք, Հռովմայեցիք · Անմահից դաս
« Ունին առ մեզ կառուցեալ պէշ ըզհայեցուածս ·
« Եւ տեսանեն , ձերով այո՛ շընորհիւ
« Շարս եղերանց բազմաթիւ ։
« Ծայրահեղեալ ագահութիւնըն վայրագ
« Առ մեզ կացոյց զպաշտօն դից ծաղրը ծանակ ։
« Վերակացուացն որք 'ի Հռովմայ առ մեզ գան,
« Չէ ինչ մի բան բաւական ,
« Ընդ վայր ճըգնին երկիր, մըշակ քըրտնաջան
« Առ 'ի լընուլ զնոցին տենչ ։
« Ո՛ն անդր, բարձէք զարօտ 'ի մէնջ ·
« Ջեռք մեր լըքեալք թողացան ,

digitised by A.R.A.R.@

« Երկիրս մընայ անխընամ։
« Թողեալ զքաղաքս, ըզտունս, ընկերս սիրալիս
« Դիմեմք յախուռն 'ի լերինս։
« Զի մի այլ ևս գործեալ զերկիրս յոքնամարդ,
« Խըրոխտն Հռովմայ տացուք զորդիս մեր նըկուն,
« Զոր յարհամարհ ունի անտես ՚ի նախատ։
« Ո՛ւր թէ ծընունդք մեր կենդանիք որք այժմ կան
« Մահ ըզնոսա տանէր յաւար տարաժամ...
« Գըրեթորք ձեր ըզմեզ եղուկս և թըշուառս
« վարեն կործել զաններելի ըզյանցանս։
« Ի բաց տարէք զարսդ անօրէն,
« Որք առ մեզ զախտս և զվատութիւն ճարակեն։
« Գերմանացիքս լիցին նոցա հանգունակ
« Ցափըշտակողք և ագահք։
« Եւ զայս ահա, 'ի քաղաքիս ես տեսի.
« Եթէ չեն քեզ նըւէրք և տուրք 'ի կաշառ
« Եւ կամ ընծայ ազնիւ ծովու ծիրանի,
« Ցարդարութիւն մի յուսասցիս դու 'ի սպառ,
« Ցերկար անտես մնայքդ դատ,
« Այլ թէ պընդես, դու ինքդ լինիս դատապարտ։
« Թերևս բանք իմ անաչառ
« Զեղեն հաճոյ յայս կաճառ։
« Լըռեմ ահա։ Տուք զիս մահու.
« վասըն բանիցս բողոքարկու »։
Զայս ասելով, անդէն 'ի գուճըս անկաւ.
Զամենեսին զարմանք հիացումն ահ կալաւ,
Ընդ մեծ սիրտ առն, ընդ խօսս արդար
Եւ ընդ ճարտար բանիցըն չար։
Անդ առ ետեղ գրեցաւ գեղջուկն այն արի
Ընդ պատրըկացն համարի։
Ցետս պրետորք անդրէն 'ի Հռովմ կոչեցան։
Ծերակուտին հրամանաւ
'ի գիր հանին զգեղջկին բան,
Օրինակի ազգաւ.
Զի յապագայս թէ ոք ճառել կամիցի,
Իբր օրինակ՝ զայս բան հանդէպ ունիցի։
Սակայն Հըռովմ ոչ յերկար
Գընաց ընդ այն ճանապարհ։

ԼԱՖՈՆԹԷՆ

ԵՐԿԱԹ ԵՒ ՈՒՌՆ

Դըժոխքի նըման փուռէն՝ հանելով
Կաս-կարմիր երկաթն, և ունելիքով
Մեծ սալին վըրայ՝ հեռուէն բըռնած,
Երբ կը ծեծէին խոշոր մեծ Ուռով,

digitised by A.R.A.R.@